

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 15/1

9 սեպտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ 06.08.2014 թ-ի թիվ 25 վարչական բողոքը ՀՀ ՖՆ օպերատիվ-հետախուզության վարչության 02.07.2014 թ-ի թիվ 1004374 ստուգման ակտի դեմ:

«ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ օպերատիվ-հետախուզության վարչության կողմից «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ում կատարված ստուգման արդյունքում 02.07.2014 թ-ին կազմվել է թիվ 1004374 ակտը, որով ընկերությանն առաջադրվել է 198.062.308 ՀՀ դրամի հարկային պարտավորություն ԱԱՀ-ի գծով:

Ակտով ամրագրված հարկային պարտավորության հետ ընկերությունը համաձայն չէ և ակտը գտնում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ:

Ինչպես նշված է ակտում «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ն Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գրանված «Դր. Թոմաս Մյուլլեր-Յուլիստ-ունդ Նուտցվիխ» կազմակերպության հետ 11.07.2012 թ-ին կնքել է համատեղ գործունեության պայմանագիր ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կողմից տոհմային երինջների ձեռքբերման նպատակով հայտարարված բաց ընթացակարգին մասնակցելու համար:

Պայմանագրի 2.1 կետի համաձայն տոհմային երինջների ձեռքբերման և Հայաստան տեղափոխման պարտականությունը դրված է եղել գերմանական ընկերության վրա, իսկ 2.2 կետի համաձայն «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ն պարտավորվել է ապահովել գործարքի ֆինանսական և փաստաթղթային, այդ թվում՝ մաքսային ձևակերպման գործընթացը: Պայմանագրի 3-րդ կետի համաձայն գերմանական ընկերությունը լիազորել է «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ին պայմանագրի հետ կապված գործընթացներում գործել իր անունից:

02.11.2012 թ-ին կոնսորցիումի մասնակիցների և ՀՀ Գյուղատնտեսության նախարարության միջև կնքվել է թիվ ՀՀ ԳՆ-ԲԸԱՀԱՊՁԲ-12/01-ԱԱՎ-158 տոհմային երինջների մատակարարման պետական գնման պայմանագիրը, համաձայն որի կոնսորցիումի մասնակիցները, որպես վաճառող պարտավորվել են նախարարությանը մատակարարել տոհմային երինջներ:

Մատակարարումն իրականացվել է մի քանի փուլով: 19.04.2013 թ-ի թիվ C 4322 մաքսային հայտարարագրով մատակարարվել և մաքսազերծվել է 229 երինջ 243.128.613 ՀՀ դրամ արժեքով, 26.04.2013 թ-ի թիվ C 4654 մաքսային հայտարարագրով մատակարարվել և մաքսազերծվել է 186 երինջ 220.714.296 ՀՀ դրամ արժեքով և 01.06.2013 թ-ի թիվ C 6490 մաքսային հայտարարագրով մատակարարվել և մաքսազերծվել է 31 երինջ 36.936.438 ՀՀ դրամ արժեքով: 1

Բոլոր դեպքերում, ինչպես դա երևում է ուղեկցող փաստաթղթերից /բեռնագրերից/, երինջները գնել և մատակարարել է գերմանական կազմակերպությունը: Ապրանքը ՀՀ Գյուղատնտեսության նախարարության ներկայացուցչին է հանձնվել ՀՀ մաքսային սահմանի վրա և այն Հայաստան է ներկրել նախարարությունը:

«ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ն կոնսորցիումի պայմանագրի համաձայն ընդամենը կատարել է փաստաթղթերի ձևակերպման հետ կապված իր պարտականությունները: Սակայն, թյուրիմացության պատճառով 19.04.2013 թ-ի թիվ C 4322 և 26.04.2013 թ-ի թիվ C 4654 հայտարարագրերում որպես ներմուծող ՀՀ գյուղատնտեսության նախարարության փոխարեն նշվել է «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ն: Դրա պատճառով ստուգողներն այդ երկու բեռնագրերով ապրանքի մատակարարող /սեփականատեր/ համարել են «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ին և գտել են, որ ընկերությունը պարտավոր է վճարել ԱԱՀ: Սակայն, ինչպես նշվել է, ըստ ուղեկցող փաստաթղթերի /բեռնագրերի/ «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ն գործարքի կատարման ոչ մի փուլում չի հանդիսացել երինջների սեփականատեր: Դրանք գնել և ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը մատակարարել է գերմանական ընկերությունը: Դա հաստատվում է 01.06.2013 թ-ի թիվ C 6490 հայտարարագրով, որը կազմվել է նույն պայմանագրի և ուղեկցող փաստաթղթերի

հիման վրա, ճիշտ է լրացվել և այդ հայտարարագրով մատակարարված երինջների համար ստուգողների կողմից «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ին ԱԱՀ-ի պարտավորություն չի առաջադրվել:

«ԱԱՀ» մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝ 1) ապրանքների մատակարարումը գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով:

Այսպիսով, «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ն վերագրյալ գործարքի իրականացման ոչ մի փուլում չի հանդիսացել տոհմային երինջների սեփականատեր և այդ իրավունքը չի փոխանցել և չէր կարող փոխանցել այլ անձի: Հետևաբար ընկերության հանդեպ ԱԱՀ այդ գործարքի արդյունքում չի կարող առաջանալ:

Ընկերությունը սխալը ուղղելու խնդրանքով դիմել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը, որն իր հերթին 18.05.2013 թ-ի թիվ ՍԿ/06.2/2453-13 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին, սակայն ՊԵԿ-ի 21.05.2013 թ-ի թիվ 01/8-2/5842-13 գրությամբ տրվել է պատասխան, որ մաքսային հայտարարագիրը կարող է միայն ճանաչվել անվավեր, որի հիմքերը բացակայում են: Միաժամանակ տեղեկացվել է, որ անկախ նրանից, թե ում անունով է ձևակերպվել ապրանքը ՀՀ գյուղատնտեսության նախարարության, թե «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ի, ԱԱՀ-ի վճարումից ազատման արտոնություն չի նախատեսված: Սակայն տվյալ դեպքում խոսքը գնում է սխալի ուղղման մասին: Բացի այդ, եթե նոյնիսկ ԱԱՀ-ից ազատման հնարավորություն նախատեսված չէ, այնուամենայնիվ, եթե որպես ապրանքի ներկրող նշվի ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, ապա վճարելու պարտականությունը պետք է դրվի նախարարության վրա, և ոչ թե ընկերության:

ՀՀ մաքսային օրենսգրքի 135-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, մաքսային հայտարարագիրը կարող է անվավեր ճանաչվել նաև սխալի առկայության հիմքով, իսկ 6-րդ մասի համաձայն, այն կարող է փոփոխվել հայտարարատուի և մաքսային մարմնի համաձայնությամբ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կազմակերպված բաց ընթացակարգի պայմանների և դրանց հիման վրա կնքված պայմանագրի համաձայն, տոհմային երինջների մատակարարման գործարքի գինը սահմանվել է առանց ԱԱՀ-ի: Գնային առաջարկը ընկերության կողմից կատարվել է նույնպես առանց ԱԱՀ-ի և այն հաստատվել է: ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն այդ հանգամանքի մասին նշել է իր 18.05.2013 թ-ի թիվ ՍԿ/06.2/2453-13 գրության մեջ:

Նման պայմաններում, եթե գործարքը ենթակա է ԱԱՀ-ով հարկման, դա պետք է նախատեսված լիներ նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անցկացվող բաց ընթացակարգի պայմաններով, ներառվեր պայմանագրի գնի մեջ և վճարվեր «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ին, որն իր հերթին կվճարեր այն պետական բյուջե: Հակառակ դեպքում ստացվում է, որ ԱԱՀ-ի գումարն ընկերությունը պետք է վճարի իր հաշվին, ինչը ոչ միայն օրինական չէ, այլ պարզապես անհնար է, քանի որ ընկերությունը չունի նման միջոցներ և նման իրավիճակում ընկերությունը կանգնեցվում է փաստացի սնանկության առջև:

Այսպիսով, 02.07.2014 թ-ի թիվ 1004374 ակտով «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ին առաջադրվել է անհիմն հարկային պարտավորություն:

Կազմված ակտի հիման վրա ՀՀ ՖՆ էրեբունու հարկային տեսչության պետը 14.07.2014 թ-ին կայացրել է որոշում՝ «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ից 188.079.010 դրամ գանձելու վերաբերյալ /ընկերությունը այն չի ստացել, հետևաբար այն ուժի մեջ չի մտել/, որից հետո ՀՏ մասնագետների 22.07.2014 թ-ի թիվ 027941 որոշմամբ արգելանք է դրվել «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ին պատկանող գույքի, ավտոտրանսպորտային միջոցների և բանկային հաշիվների ու դրմարկղում առկա միջոցների վրա:

Մի կողմ դնելով առաջադրված պարտավորության հիմնավորվածության հարցը հարկ է նշել, որ «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ն երբեք չի ունեցել խնդրահարույց հարկային պարտավորություններ, այն եղել է աշխատող ընկերություն, ստեղծել է «Մանանա» ապրանքանիշը, որը ճանաչում է ստացել ամբողջ աշխարհում, աշխատանքով է ապահովել ոչ միայն իր հաստիքային աշխատակիցներին այլ նաև Հայաստանի լեռնային գյուղերի հարյուրավոր բնակիչներին: Սակայն ստեղծված իրավիճակում, երբ կազմվել է ակտը և ընկերության գույքի վրա

դրվել է արգելանք, ընկերությունը գրկվել է նաև իր աշխատակիցներին վարձատրելու ու դրանից ծագող հարկային պարտավորությունները կատարելու հնարավորությունից: Բացի այդ, ընկերությունն իր պահեստներում ունի իրացման համար պատրաստի արտադրանք, այդ թվում փչացող, որը կարող է իրացնել և կատարել ընթացիկ պարտավորությունները մինչև լուծվի կազմված վիճահարույց ակտի հարցը: Նման պայմաններում գտնում եմ, որ ընկերության գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքն առավել քան անհիմն է և նպատակ ունի կազմալուծել ընկերության աշխատանքը:

Ելնելով վերոգրյալից և հիմնվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69, 70 հոդվածների վրա ընկերությունը խնդրում է

- ճանաչել անվավեր ՀՀ ՖՆ օպերատիվ-հետախուզության վարչության կողմից 02.07.2014 թ-ին կազմված թիվ 1004374 ակտը,

- ճանաչել անվավեր ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 14.07.2014թ. որոշումը,

- ճանաչել անվավեր ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 22.07.2014 թ-ի թիվ 027941 որոշումը,

- ուղղում կատարել 19.04.2013 թ-ի թիվ C 4322 և 26.04.2013 թ-ի թիվ C 4654 մաքսային հայտարարագրերում՝ «Ներմուծող» դաշտում «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ի փոխարեն նշել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 05.08.2013 թ-ի թիվ 1004374 հանձնարարագրի համաձայն «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ՕԿՎ 02.07.2014 թ-ի թիվ 1004374 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 198.062.308 դրամ:

Ստուգման ակտի 5-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության 1-ին բաժնի հետաքննիչի կողմից ուղարկված նյութերի, ընկերության կողմից ստուգման շրջանակներում ներկայացված փաստաթղթերի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գրանցված «Դր. Թոմաս Մյուլլեր-Յոլխտ-ունդ Նուտցվիխ» կազմակերպության և ՀՀ-ում գրանցված «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ միջև 11.07.2012 թ-ին կնքել է համատեղ գործունեության պայմանագիր ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կողմից տոհմային երինջների ձեռքբերման նպատակով հայտարարված բաց ընթացակարգին մասնակցելու և հետագայում ընտրվելու դեպքում տոհմային երինջները մատակարարելու: Վերոնշյալ պայմանագրի 3-րդ կետի համաձայն պայմանագրով իրականացվող գործունեության ընդհանուր գործերը վարել է «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ն, միաժամանակ պայմանագրի 1.1-րդ կետով սահմանված բաց ընթացակարգերին մասնակցելու ողջ գործընթացում «Դր. Թոմաս Մյուլլեր-Յոլխտ-ունդ Նուտցվիխ» կազմակերպությունը իրավասություն է վերապահում «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ իր անունից հանդես գալու, այդ թվում՝ կնքելու պայմանագրեր և այլ գործարքներ: 02.11.2012 թ-ին «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ն և «Դր. Թոմաս Մյուլլեր-Յոլխտ-ունդ Նուտցվիխ» կազմակերպությունը գործելով համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա ՀՀ Գյուղատնտեսության նախարարության հետ կնքում են տոհմային երինջների մատակարարման պայմանագիր, որտեղ վերոհիշյալ կազմակերպությունը և ընկերությունը երկուսով միասին հանդիս են գալիս որպես վաճառող, իսկ ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունը՝ որպես գնորդ: Այնուհետև, 2013 թ-ի ապրիլ ամսին «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ն ՀՀ տարածք է ներմուծում 415 գլուխ կենդանի երինջներ՝ ընդհանուր գումարով 453.842.900 դրամ և 26.04.2013 թ-ին դուրս է գրվում թիվ 377 հաշվարկային փաստաթուղթը /որում ԱԱՀ-ի գումարի առանձնացում, չի կատարվել/ մատակարարելով ՀՀ Գյուղատնտեսության

նախարարությանը 415 գլուխ կենդանի երինջներ՝ ընդհանուր գումարով 466.779.135 դրամ: Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 1028-րդ հոդվածի 1-ին մասի՝ համատեղ գործունեության արդյունքում արտագրված արտադրանքը և այդպիսի գործունեությունից ստացված պտուղներն ու եկամուտները համարվում են նրանց ընդհանուր բաժնային սեփականությունը: Համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք է համարվում մասնավորապես՝ ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով: Համաձայն նայն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի՝ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը, որը չի արտացոլվել համապատասխան ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկում կազմում է 466.779.135 դրամ: Արդյունքում, հիմք ընդունելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 9-րդ, 43-րդ հոդվածների և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ հոդվածների դրույթները ԱԱՀ-ի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 198.062.308 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գրանված «Դր. Թոմաս Մյուլլեր-Յուլիտ-ունդ Նուտցվիխ» կազմակերպության (Գործընկեր 1) և «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ (Գործընկեր 2) միջև 02.10.2012 թ-ին կնքվել է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն, կողմերը (Գործընկեր 1 և Գործընկեր 2) պայմանավորվում են գործելով համատեղ՝ մասնակցել ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կողմից տոհմային երինջների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգին:

Պայմանագրի 2.2 կետի համաձայն, Գործընկեր 2-ը պարտավորվել է ապահովել տոհմային երինջների ձեռքբերման և տեղափոխման հետ կապված անհրաժեշտ ֆինանսական միջոցները, հրավերով և գնման պայմանագրով պահանջվող երաշխիքները, ինչպես նաև ապահովել ձեռք բերված տոհմային երինջների Հայաստանի Հանրապետություն ներկրման և մաքսազերծման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումները, ինչպես նաև գնման պայմանագրով սահմանված մնացած կետերի պահանջների կատարումը:

Իր հերթին, ՀՀ գյուղատնտեսության նախարարության (Գնորդ) և «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ն ու «Դր. Թոմաս Մյուլլեր-Յուլիտ-ունդ Նուտցվիխ» կազմակերպության, որոնք գործում են համատեղ գործունեության (Կոնսորցիումի) պայմանագրի հիման վրա (Վաճառող) 02.11.2012 թ-ին կնքվել է տոհմային երինջների մատակարարման պետական գնման պայմանագիր:

19.04.2013 թ-ի թիվ C 4322 և 26.04.2013 թ-ի թիվ C 4654 մաքսային հայտարարագրերի համաձայն «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ն ՀՀ տարածք է ներմուծել համապատասխանաբար 229 և 186 գլուխ (ընդամենը 415 գլուխ) կենդանի երինջներ: Այնուհետև, «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ կողմից 26.04.2013 թ-ին դուրս է գրվել թիվ 377 հաշվարկային փաստաթուղթը, որով ՀՀ Գյուղատնտեսության նախարարությանը մատակարարվել է 415 գլուխ կենդանի երինջներ՝ ընդհանուր գումարով 466.779.135 դրամ:

Վերոգրյալ փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ն հանդիսացել է տոհմային երինջների ձեռքբերող կողմը և մինչև ՀՀ սահմանը հատելը դարձել է դրանց սեփականատերը: Նշված հանգամանքը հիմնավորվում է ՀՀ Մաքսային օրենսգրքում պարունակվող հետևյալ նորմերով: Մասնավորապես, ՀՀ Մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, որպես հայտարարատու կարող է հանդես գալ ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը: Նույն օրենսգրքի 2-րդ հոդվածի ժ) մասի համաձայն, ապրանքներ տեղափոխող անձ է համարվում ապրանքների սեփականատեր, գնորդ, հանդիսացող կամ ապրանքների նկատմամբ տիրապետման կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքներն իր անունից սույն օրենսգրքով նախատեսված կարգով տնօրինման լիազորություններով օժտված անձը:

Շեղանապես, համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ կողմից 26.04.2013 թ-ի թիվ 377 հաշվարկային փաստաթղթով ՀՀ Գյուղատնտեսության նախարարությանը թվով 415 գլուխ կենդանի երինջների՝ ընդհանուր գումարով 466.779.135 դրամ, մատակարարման գործարքը պետք է հարկվեր ավելացված արժեքի հարկով, սակայն չի հարկվել:

ինչ վերաբերվում է «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ բողոքում բերված պնդումներին, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կազմակերպված բաց ընթացակարգի պայմանների և դրանց հիման վրա կնքված պայմանագրի համաձայն, տոհմային երինջների մատակարարման գործարքի գինը սահմանվել է առանց ԱԱՀ-ի, ապա այն չի համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, վերը հիշատակված ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ն ու «Դր. Թոմաս Մյուլեր-Յուխտ-ունդ Նուտցվիխ» կազմակերպության միջև 02.11.2012 թ-ին կնքված պայմանագրի 4.1 կետով հստակ սահմանվել է, որ պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 545513.0 հազ. ՀՀ դրամ, ներառյալ հարկերը: Նույն կետի համաձայն, ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի («ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ) կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Բողոքում բերված այն պահանջը, որը վերաբերվում է ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 14.07.2014 թ-ի որոշումը և ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 22.07.2014 թ-ի թիվ 027941 որոշումն անվավեր ճանաչելուն, հիմնավոր չէ, քանի որ նշված որոշումներն ընդունվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 և 30.2 հոդվածների, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ և 88-րդ հոդվածներով սահմանված կարգով: Ընդ որում, բողոքում բերված պնդումներն այն մասին, որ ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 14.07.2014 թ-ի թիվ 1143 որոշումն ընկերությունը չի ստացել, հետևաբար այն ուժի մեջ չի մտել, հիմնավոր չեն, քանի որ գործում առկա է նշված որոշման օրինակը, որի վրա ընկերության տնօրենի կողմից կատարված գրառման համաձայն, որոշման օրինակը վերջինիս կողմից ստորագրությամբ ստացվել է 15.07.2014 թ-ին:

Ինչ վերաբերվում է բողոքում բերված հաջորդ պահանջին, որը վերաբերվում է 19.04.2013 թ-ի թիվ C 4322 և 26.04.2013 թ-ի թիվ C 4654 մաքսային հայտարարագրերում ուղղում կատարելուն, այն է՝ «Ներմուծող» դաշտում «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ի փոխարեն նշել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը, ապա այն հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ՖՆ նախարարի 10.04.2014 թ-ի «Հայտարարագրված ապրանքների և տրանսպորտային միջոցների բացթողումից հետո մաքսային մարմինների ընդունած մաքսային հայտարարագրի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու ճշգրտումների փաստաթղթի ձևը հաստատելու մասին» թիվ 155-Ն հրամանով հաստատված Կարգի 4-րդ կետի համաձայն. «Մաքսային հայտարարագրի փոփոխման ենթակա չեն՝

1) ներմուծման ռեժիմների դեպքում՝ հայտարարագրի 1, 8 և 14 դաշտերում հայտարարագրված տեղեկությունները»:

Քննարկվող դեպքում 19.04.2013 թ-ի թիվ C 4322 և 26.04.2013 թ-ի թիվ C 4654 մաքսային հայտարարագրերի 8-րդ դաշտում արտացոլված են ներմուծող՝ «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները, որոնք փոփոխման ենթակա չեն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ ՕՀՎ 02.07.2014 թ-ի թիվ 1004374 ստուգման ակտը թողնել անփոփոխ, իսկ «ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ 06.08.2014 թ-ի թիվ 25 վարչական բողոքը՝ մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝


ԿԱՄԻՐՈՒՄՅԱՆ